

**ԹԵՔՈՒՅԹԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԵՐԹԱԳԱՅՈՒԹՅԱՆ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ  
ՊԵՐՃ ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ**

Ա.Ա.ՍԱՐՀԱՏՅԱՆ

Կապակցման միջոցները այն գործող գործոններն, որոնցով միայն կարելի է խոսք կազմել: Շարահյուսական կապակցման միջոցներով (կապ, շաղկապ, թեքույթներ և այլն) խոսողը, գրողը ոչ միայն նախադասություններ է կազմում, ու խոսք կառուցում, այլև ոճավորում է իր խոսքը: Որպես կապակցման միջոցներ, ուրույն նշանակություն ունեն թեքույթավորումը և հերթագայությունը:

Ժամանակակից Հայերենը հարուստ է թեքույթավորման միջոցներով՝ հոլովական վերջավորություններով, հոգնակիակերտ մասնիկներով, հոգերով, բայական (դիմորոշ և դերբայական) վերջավորություններով:

Գոյականի հոլովման համակարգում դրսևորվող զուգահեռ ձևերը խոսքը ոճավորելու հարուստ միջոցներ են, որ իմաստային բազմազանություններ արտահայտելու առումով անգնահատելի նշանակություն ունեն Պերճ Զեյթունցյանի արձակում:

Հայերենի հոլովներից յուրաքանչյուրն ունի լեզվական իր գործառնությունը և ցույց է տալիս, թե տվյալ հոլովով դրված առարկան ինչ հարաբերության մեջ է գտնվում. այլ առարկաների ու կատարվող գործողությունների նկատմամբ: Արտահայտած հարաբերություններով պայմանավորված՝ բառաձևերը խոսքի մեջ գործածվում են անփոփոխ կամ փոփոխված. վերջինս արտահայտվում է թեքույթավորմամբ կամ հերթագայությամբ: Անվանի լեզվաբան Գ.Բ. Զահուկյանը գտնում է, որ «Եթե զանց առնենք զուտ գրաբարատիպ հոլովաձևերը..., ապա կարելի է նշել Հայերենի համար առաջին կարգի հոլովական տասնութ թեքույթ՝ տասը վերջավորություն և ութ հերթագայություն»<sup>1</sup>:

Հայերենի գոյականների ձևափոխությունը առավելապես արտահայտվում է եզակի թվի սեռական-տրական հոլովներում, ըստ որում, այդ ձևափոխությունները միանման թեքման չեն ենթարկվում:

Մեր լեզվի պատմական զարգացման հետևանքով գոյացել են բազմաթիվ զուգահեռություններ, որոնք գործածվում են գործառնական տարբեր ոճերում: Այսպես՝ որոշ բառեր միևնույն հոլովի կրկնակ ձևեր են հանդես բերում՝ հին և նոր, գրական և ժողովրդական: Որոշ գոյականներ էլ բոլոր հոլովաձևերը չունեն, առկա են գրաբարյան վերապրուկ ձևեր, քարացած հոլովաձևեր, որոնք չեն գիտակցվում իբրև գոյականի հոլովված ձևեր, չեն հակադրվում մյուս հոլովներին, հետևաբար ձեռք են բերել այլ խոսքի մասի նշանակություն:

Որոշ հոլովաձևեր պահպանվել են իբրև հնաբանություն, մի շարք զուգահեռ էլ տեղի են տվել կամ դարձել համանիշ ձևեր: Թեքույթավորման և հերթագայության բազմազան դրսևորումները՝ որպես շարահյուսական կապակցման միջոցներ, ոճական մեծ արժեք ունեն:

<sup>1</sup> Տես՝ Գ.Բ. Զահուկյան, Ժամանակակից Հայերենի տեսության հիմունքներ, Ե., 1974, էջ 187:

Լեզվական այս միջոցներից Պ. Զեյթունցյանը կատարում է գիտակցված այնպիսի ընտրություն, որ համապատասխանի իր ընտրած նյութին, մտահղացումներին, իր գեղարվեստական մտածողությանը:

Հոլովածուների ոճական կիրառությունները: Ինչպես հայտնի է, ուղղական հոլովը, հատկապես նրա եզակի թիվը գոյականի ելակետային ձևն է: Ուղղական-հայցական հոլովը համանիշ ձևեր է կազմում կապերի հետ կիրառվելիս՝ ձևաբանական արժեք, ստեղծելով ոճական տարբերակ:

Խոսքին վերամբարձ երանգ են տալիս և այն հնարավոր դարձնում այս հոլովի հետ գործածվող ի, ի վեր, ի վար կապերի կիրառությունները: Պ. Զեյթունցյանը «Արշակ Երկրորդ» պատմավեպում այս կապերը գործածում է անցյալ ժամանակահատվածին բնորոշ լեզվական միջավայր ստեղծելու, այդ ժամանակի հերոսի խոսքը ոճավորելու համար. «Ուրեմն՝ ի սեր նրա, պիտի խլացնես քո ձայնը, պիտի խեղդես թոքերիդ խորքում և ականջ դնես փաստերին, միայն փաստերին և նորից ու նորից միայն փաստերին...»<sup>2</sup>: «Հենց վազելիս էլ սկսվեց նրա երկունքը, ու նա մի արու զավակ ծնեց, որին հետագայում, ի հիշատակ հոր, Վարդան կոչեն» /379/:

Իրենց դարձնալով լեզվական այս ձևերը Զեյթունցյանը օգտագործում է շատ չափավոր ու տեղին և դրանցով երբեք չի ծանրաբեռնում իր խոսքը:

Պ. Զեյթունցյանը գրաբարյան որոշ քարացած ձևերին է դիմում կարևորելով ոչ միայն նրանց բնական առանձնահատուկ լիցքերը, նրանց արտահայտած իմաստային հարաբերությունները, այլև սեղմությունը, կարճ հնչողությունը:

Ի կապի հետ գրողը գործածում է նաև բայանուններ, որոնք թեև ունեն համանիշ ձևեր, սակայն նրանք այլ երանգ կհաղորդեն խոսքին. «Բարակ ու նազուկ հոգերը միանում են քաղաքի վրա ու քամի դառնում, բաց անում թաքուն տենչերի պինդ կեղևները, մերկացնում և ափի մեջ պահում, ի ցույց դնում աշխարհին» /141/: Մի ուրիշ օրինակ. «Դահճապետ Երազմակը հենց նոր հայտնեց, որ հրամանդ ի կատար է ածված» /161/:

Մի ամբողջ նախադասության արժեք ունի ի տես կառույցը, որն իր սեղմությունը ու պարզությունը գերազանցում է բոլոր համանիշ ձևերին. «Արքան, մտքերի մեջ խորասուզված, արցունքն աչքերին, չքեղ հանդերձները հագին, կարծես ի տես ամենքի, անշարժացել էր տաճարի կենտրոնում» /445/:

Ընտրության որոշ հնարավորություն տալիս է ուղղականի հոգնակին, քանի որ գոյականը կարող է ընդունել և՛ գրական, և՛ ժողովրդական, և՛ գրաբարյան տարբեր վերջավորություններ: Հայերենի գոյականների բացարձակ մեծամասնությունը, նաև գոյականաբար գործածված բոլոր բառերը հոգնակի թիվում ստանում են եր, ներ: Գրական այս ձևերը ոճական առումով չեզոք են:

Պատմական թեմայի թեյադրանքով Պ. Զեյթունցյանը հաճախ գործածում է գրաբարյան ք վերջավորությամբ գոյականներ՝ վաղնջական ժամանակների ոգին ընդգծելու, թարմացնելու համար. «Հետո պիտի գային գուսաններն ու վարձակները՝ քմբկահարք, սրնգահարք, քնարահարք և փողահարք: ...Վարձակները պիտի ցուցադրեն իրենց փափուկ մատների աշխուժությունը... Սպասավորները պիտի աղանդեր բերեն... Կշտացած ու հարբած

<sup>2</sup> Պ եր ճ Զ եյ թ ու ն ց յ ա ն , Արշակ Երկրորդ, Ե., 1977, էջ 184: Այսուհետև պատմավեպից արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:

նախարարները պիտի բարիանային և սեր բացատրեին միմյանց...» /53/: Նույն Հատվածում ուղղական Հոլովի Հոգնակի թվի գրական եր, ներ և գրաբարյան ք թեքույթներով գրողը ոճական բազմազանություն է ստեղծել, խոսքը զերծ պահել միօրինակությունից և ընդամենը չորս բառով՝ Թմբկահարք, արնգահարք, քնարահարք, փողահարք, գողթան երգերի քաղցրահունչ մի մեղեգի արթնացրել, գունագեղ պատկեր ստեղծել:

Պ. Զեյթունցյանը դարերի փոշին մաքրում է տասնյակների Հասնող բառերի վրայից ու մեջ ներկայացնում նոր փայլով, բայց Հին ձևով՝ առարկայական և լեզվական. «Ապա տաճարի Հատուկ սրահում Հանում էին կնգմենիք, գայլենիք, աղվեսենիք, որոնք արքունի քղամիդի պես բազուկներն ազատ թողած, ճարմանդված էին աջակողմյան ուսի մոտ և իջնում էին պատմուճանին Հավասար» (53):

Գրաբարյան ենիք թեքույթը և՛ Հոգնակի թվի արժեք ունի, և՛ ուղղականի: Այն իր մեջ ներառում է նաև մորթու իմաստը. կնգմենիք – կնգումի մորթիները, գայլենիք – գայլի մորթիները, աղվեսենիք – աղվեսի մորթիները:

Հոլովական ձևերի ընտրությունը ավելի լայն հնարավորություններ է տալիս սեռական հոլովը, որովհետև այն ունի բազմաթիվ Հոլովիչներ: Հոլովման տատանումները դրսևորվում են գոյականների եզակի թվում՝ այս Հոլովաձևի թեքույթների թիվը հասցնելով 14-ի:

Ամենից ավելի տարածված Հոլովումը, որ ընդգրկում է գոյականների բացարձակ մեծամասնությունը, ի Հոլովումն է: Այս Հոլովմանը պատկանող բառերը կազմում են արդի Հայերենի գոյականական բառապաշարի 68,5 տոկոսը: Պ. Զեյթունցյանի խոսքում, որպես կանոն, գործ են ածվում գրական լեզվին յուրահատուկ քերականական ձևերը: Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշել ենք, այս Հոլովաձևում, նույնիսկ ի Հոլովման պատկանող բառերի թեքույթավորման ժամանակ, տարբերակվում են գրական նորմի տեսակետից Հավասարարժեք և ոչ Հավասարարժեք հնչյունական գույքաձևեր, որոնցից մեկի կամ մյուսի ընտրությունը բխում է Հեղինակի ճաշակից: Բայց ահա, պատմական թեմատիկայի տվյալ պահի թելադրանքով ոճական յուրահատուկ երանգավորում ստեղծելու Համար գրողը գործածում է գրաբարյան ա թեքույթը. «Կոչնակները գալիս էին իրենց ծառաներով, մտնում էին Տրդատա դռնից, իջնում նժուզներից և, աջ սրտին մոտեցնելով, ողջունում միմյանց, ձեռք սեղմում» (30): «Գնելն ընտրեց Աղիովիտը, որը գտնվում էր Ապահունիքից արևելք՝ Վանա լճի Հյուսիսային մասում» /106/: Այստեղ ա թեքույթը ոչ մի թեքույթով փոխարինել հնարավոր չէր, որովհետև պատմաբույր նույն շունչը չէր հաղորդի խոսքին:

Նույն նպատակով պատմականորեն բնորոշվող ու արտաքին թեքույթով է գործածել մահ բառը. «Ու թեև ամենքն էլ անխտիր սիրում էին Ներսեսին, բայց ոչ ոք չէր ուզում ասպարեզ ելնել նրա հետ մրցելու, որովհետև զվարճությունը նա դարձնում էր գործ ու վերածում մահու և կեցաց հարցի»:

Պատմական երանգավորում ստեղծելու նպատակով է կիրառվել նաև կյանք բառի կեցաց ձևը, այլապես գրողը կկիրառեր կյանքի ու մահի ձևը: Անշուշտ, ոճական միօրինակությունից խոսքը զերծ պահելու Համար նա գործածում է նաև մահվան ձևը. «Նա Գնելի Հսկայական արձանը կկանգնեցնի Արտաշատ մայր քաղաքում, նրա անունով նոր քաղաք կկառուցի, ամեն տարի նրա մահվան օրը սուգ կհայտարարի ամբողջ երկրով մեկ...» /186/:

Որոշ գոյականներ պատմական Հոլովաձևով գործածելը պայմանավորված

է ավանդականի ավելի ախորժալուր հնչմամբ. թո՛ւ կամ լե՛ռ գոյականների ան թեքույթով գործածելը ավելի բարեհունչ է, քան թո՛ւի կամ լե՛ռի՝ ի թեքույթով հոլովաձևերը: Օրինակ. «Տիրանն իր թոռան հետ քաշվեց Արագածի փեշերին ընկած Կվաշ ավանը» /104/: «Բայց մինչ ես Վասակն էի, ես հսկա էի, մի ոտքս մի լեռան վրա էր, մյուս ոտքս՝ մի այլ լեռան վրա» /516/:

Եվ հետո՝ փոխարինումները բացարձակ չեն, ունեն նաև սահմանափակումներ: Ասածի վկայությունն է սեր բառի ո թեքույթով, աղջիկ բառի ա թեքույթով, գործածությունը, որոնք, չնայած իրենց պատմական ծագմանը, կանոնիկ են նաև արդի գրական լեզվում, որին էլ հարազատ է մնացել Պ. Զեյթունցյանը: «Մի՞թե դու չգիտես, որ բոլորը նախանձում էին քեզ, որովհետև դու ամուսնացել էիր հայոց աշխարհի ամենագեղեցիկ կնոջ՝ Սյունյաց Անդրովկ իշխանի աղջկա հետ...» /116/, «...Դու այնքան ուժեղ չես, որ քո մոլեռանդ մտքերով մեռնես... Դու սիրո մեջ էլ բուռն էիր, բայց շուտ էիր հանգում...» /117/:

Պ. Զեյթունցյանը «Արշակ Երկրորդ» պատմավեպում գործածում է գրաբարից մեր լեզվին անցած սեռականի որոշ հոլովաձևեր, որոնք այժմ չեն գիտակցվում իբրև հոլովական ձևեր. «Պարսից թագավորը, ձեռքս բռնած, ինձ հետ ճեմում էր ընդարձակ սենյակում» /519/: «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ հունաց թագավորը» /516/:

Գրաբարյան այս քարացած ձևերը իմաստային ու ոճական նուրբ տարբերակումներ են հանդես բերում՝ նաև որպես ածական ընկալվելով:

Սեռական-տրական հոլովի հոգնակի թվում, չնչին բացառություններով, գոյականները ստանում են ի թեքույթը: Բացառություն են գրաբարում ք հոգնակիակերտ վերջավորությունն ունեցող մի շարք բառեր, այդ թվում՝ տեղանուններ: Այս բառերի ք-ց հերթագայությունը գործածելը ոճական արժեք ունի, որովհետև նրանք այժմ ենթարկվում են ի հոլովման: Այս կարգի բառերը պատմական թեմատիկայի թելադրանքով հաճախադեպ են գործածվում պատմավեպում՝ ոճական կարևոր արժեք հաղորդելով գրողի խոսքին. «Արշակի ժամանակ գահնամակի առաջին չորս տեղերը զբաղեցնում էին Մոփաց, Աղձնյաց, Կորդվաց ու Գուգարաց բղեխները, ծայրամասերի կիսանկախ իշխանները՝ սահմանապահ կամ գահերեցն արքունի տաճարին: Ապա գալիս էին Սյունյաց տերը, Թագակապ իշխանություն, Բագրատունյաց ասպետը, Արծրունյաց նախարարը, Խոռխոռունի մաղխազը, Մամիկոնյան ասպետը, ընդամենը հարյուր նախարար ու տանուտեր» /30/:

Հարկ է չեչտել, որ վերոհիշյալ հավաքական հատուկ անունների սեռական հոլովը միշտ նույն՝ ք-ց հերթագայությամբ չի գործածել գրողը: Իր խոսքի ոճական բազմազանությունը հետամուտ՝ Պ. Զեյթունցյանը կիրառում է նաև զրանց ժամանակակից սեռական-տրական հոլովաձևեր՝ ներ թեքույթով:

Տրական հոլովի արտահայտած նույն հարաբերությունները արտահայտվում են ոչ միայն թեքույթներով, այլև կապերով: Այդ կերպ առաջանում է հոլովաձևի և կապերի համանիշություն, որոնց տարբերությունն այն է, որ կապերի արտահայտած հարաբերություններն ավելի կոնկրետ են ու որոշակի, իմաստային նրբություններն «ավելի բացահայտ են ու մեկին», որն էլ ոճական բազմազանություն ստեղծելու հնարավորություն է տալիս<sup>3</sup>:

<sup>3</sup> Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Ե., 1957, էջ 175:

Զեյթունցյանը գործածում է և՛ մեկ, և՛ մյուս համանիշը՝ պայմանավորված ասելիքի իմաստային շեշտադրությամբ. «Օլիմպիան մահնի վրա ուշ գիշերներին շարում էր իր հետ բերած զարդերն ու գոհարեղենները, որոնց նմանը չես գտնի նույնիսկ Բյուզանդիայում, էլ ուր մնաց՝ այս փոքրիկ ու անշուք երկրում» /290/: Մահնի վրա -ի փոխարեն գրողը կարող էր գործածել մահնին ձևը, բայց նա նույն տրական հոլովով դրված գիշերներին ձևի հետ կատեղծեր անբարեհնչունություն. Օլիմպիան մահնին ուշ գիշերներին...

Մեկ այլ օրինակ. «Օլիմպիան կարծես փշերի վրա կանգնած լիներ» /291/: Գրողը տրամաբանական շեշտը դրել է փշերի վրա՝ ընդգծելով Օլիմպիայի վիճակի ողջ դրամատիզմը, անելանելիությունը. օտարուհին արքունիքում արհամարհված է ու լքված, ու նրա միակ մխիթարությունը իր սերն ու իր տանջանքն էին: Պատկերավոր է փշերի վրա արտահայտությունը. արքան կանչել էր նրան ո՛չ թե ննջասենյակ, այլ գահաստահ ու հարցեր էր տալիս... Օլիմպիան ուզում էր չփոթված հայացքը փախցնել նրանից, բայց ասես կախարդված լիներ:

Մի այլ օրինակ բերենք. «էլի՞ կասես, որ ամեն ջանք չես թափում եկեղեցին արքայի իշխանությունը հակադրելու և մեծ իրավունքներ կորզելու համար» /287/:

Նպատակի հարաբերությունը հեղինակը արտահայտել է և՛ տրական հոլովաձևով (ու թեքույթով, որ ստանում են գոյականաբար հոլովվող անորոշ դերբայները), հակադրելու, և՛ տրական հոլովով ու համար կապով՝ կորզելու համար, որով խոսքը դարձել է միօրինակությունից զերծ:

Ինչպես տեսնում ենք, տրական ունի բավական հարուստ տարբերակներ, որոնք ոճական առումով լայն հնարավորություններ են ստեղծում՝ արտահայտելով ոճական նրբերանգներ, մի բան, որ ավելի սակավ է գոյականի մյուս հոլովաձևերում:

Ինչպես նշվեց, սեռական-տրական հոլովն աչքի է ընկնում ձևային հատկանիշների ոչ միօրինակությամբ: Ընտրելով այդ ցուցիչներից մեկն ու մեկը՝ հեղինակը տվյալ ձևը կիրառում է իր խոսքը ավելի նպատակասլաց, ավելի տպավորիչ դարձնելու համար:

Հոլովման ժամանակ բառը փոփոխություն է ենթարկվում՝ հոլովական վերջավորություններ ստանալով կամ վերջնահնչյուն ձայնավորի կամ բաղաձայնի փոփոխությամբ, ինչպես նաև բառամիջի ձայնավորի կամ երկհնչյունի փոփոխությամբ: «Հոլովման ժամանակ ձայնավորների, երկհնչյունների և բաղաձայնների փոփոխությունները, որոնք ունեն ձևաբանական արժեք, կոչվում են հերթագայություններ»<sup>4</sup>: Ինչպես նշում է Մ. Ասատրյանը, հայերենում բացարձակորեն գերակշռում է արտաքին թեքումը. իսկ ներքին թեքումը լայն տարածում չունի, «մաքուր» ներքին թեքում չկա, քանի որ սեռական-տրականում ներքին թեքում ունեցող բառերը թեք հոլովներում ստանում են սովորական ից, ուց, ում վերջավորությունները<sup>5</sup>:

Սեռական հոլովով ի-ու հերթագայությամբ են հոլովվում ի-ով վերջացող բառերը, և Զեյթունցյանը հարազատ է մնացել այս օրենքին, հարազատ է մնացել

<sup>4</sup> Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ե., 1970, էջ 166:

<sup>5</sup> Նույն տեղում:

նաև սեռականում ու-ա հերթագայություն ունեցող բառերի ավանդական ձևերին: Այս հոլովաձևերը ոճական արժեք, ինչ խոսք, չեն ստեղծում, որովհետև սովորական են մեր լեզվի քերականական համակարգում:

Բացառական հոլովը թեքությունների բազմազանությունը հարուստ է, ուստի համեմատաբար սակավ են նաև ոճական նրբերանգներ ստեղծելու նրա հնարավորությունները: Գրաբարից մեր լեզվին են անցել բացառականի մի քանի հոլովաձևեր, որոնք խոսքի ոճավորման նպատակով գործածել է Պ.Ջելթունցյանը: Սրանք չեն հակադրվում մյուս հոլովներին և ձեռք են բերել մակբայի արժեք: Այսպիսի բառաձևեր է գործածում գրողը, երբ ցուցադրում է Արշակի վիճակը, որը բաց պայքարի մեջ էր մտել թե՛ ներքին, թե՛ արտաքին թշնամիներին՝ պարսից շահի ու բյուզանդական կայսրի դեմ: Դիվանագիտությունն ու խորամանկությունը անգործ էին մազաչափ անգամ օգնելու արքային, որ անիմաստ, խենթ ու հուսահատական կոիվ էր սկսել՝ մահվան գնալով: Ու այդ ծանր պահին նա գգում էր Փառանձեմի օգնության կարիքը. «... Հավատարիմ մարդիկ դեռ լրիվ չէին վերացել աշխարհի երեսից, բայց չէ՛, Փառանձեմին էր ուզում, դժվար պահին դժվարությունը ձեռք բերվող օգնություն էր նրան անհրաժեշտ: Եվ չգիտես ինչու՝ ոչ տղամարդու, այլ կնոջ: Քնքուռ ի բնե, մի փոքր անօգնական, ի ծնե փոքր-ինչ անպաշտպան կնոջ» /299/:

«Երբեմն, հոլովական տարբեր ձևերը կարող են գործածվել մեծավոր իմաստներով, ինչպես նաև հոլովական մի ձևի փոխարեն կարող է հանդիպել մի ուրիշ ձև՝ ոճական կամ իմաստային նուրբ տարբերությամբ»<sup>6</sup>:

Գործիական հոլովի ոճական կիրառությունները համեմատաբար ավելի շատ են. այս հոլովը կիրառվում է տարբեր ոճերում և ունի տարբեր դրսևորումներ: Այսպես՝ հոլովական համանիշներ են դառնում դրական նորմով գործող հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերով զուգաձևերը. «Տղամարդիկ գիմիով ու մրգերով այցելում էին դրացիներին ու բարեկամներին, իսկ փեսացուները և նրանց ազգական կանայք՝ հարսնացուներին» /150/:

Ձուգաձևություններ են կազմում ով և մեր թեքությունները: Այս առումով ուշագրավ են արյուն բառի երկու թեքությունով գործածությունները. 1. «Բայց, ըստ երևույթին, ինչ-որ կապ կար այն բանի հետ, որ արյամբ ու քրտինքով վաստակած հաց չէր դա և, հենց դրա համար էլ, մի տեսակ թթառնում էր մարդու երևակայությունը» /138/, «Ուրեմն, այդ նախանձ լակոտը... Այդ չնաբարո, այդ անմորուս պատանին... Ուրեմն ինձ ու քեզ հիմարացնի՞ր... Իմ ձեռքերը հարազատիս արյունով թաթախի...» /182/:

Ջելթունցյանի արձակում հանդիպում են գործիական հոլովի զրաբարյան մի շարք քարացած ձևեր, որոնք այժմ չեն դիտվում իբրև գոյականի հոլովված ձևեր, չեն ըմբռնվում որպես գոյական, այլ ունեն այլ խոսքի մասերի նշանակություն. «Եվ շնորհիվ այդ մոռացկոտության, շնորհիվ ինքնահրաժարումի, շնորհիվ ինքն իրեն դավաճանելու, նա կա, ապրում է դեռ, այսինքն՝ երկիրը կա, երկիրն է դեռ մի կերպ ապրում» /184/, «Եվ՝ նա բնավ չէր սպասում, որ պարսկուհին՝ այդ հրաշալի էգը, այդպիսի արժանապատվությամբ կրնդունի մարտը և պատշաճ հակահարված կտա» /261/, «Դիտվամբ էր արել, որ մի քիչ նվաստացներ իր փետրակալած մեծամեծներին» /247/:

<sup>6</sup> Գ. Բ. Ջահուկյան, Ֆ. Հ. Խլղաթյան, Հայոց լեզու: Ոճաբանություն, Ե., 1998, էջ 96:

Հատումով -ի փոխարեն հատմամբ ձևը գրքային ոճ է համարվում, ինչպես մեղմությամբ, մեծահոգությամբ ձևերը, որոնց ով վերջավորությամբ գործիականները ժողովրդական երանգ ունեն, որն, այս դեպքում, չեն պահանջում ո՛չ երկի նյութը, ո՛չ կերպարները, ո՛չ հեղինակի խիստ գրական լեզվամտածողությունը:

Հարուստ և բազմազան են գործիական հոլովի արտահայտած իմաստային հարաբերությունները: Ահա դրանցից մի քանիսը. «Նա քայլում էր մեծ զգուշությամբ, ոտքերի մատների վրա՝ ամեն պահ վտանգ սպասելով» /325/ (ձևի հարաբերություն), «Գուցե իր չքեղ զգեստներով ուզում է վիրավորե՞լ նրան» /396/ (միջոցի հարաբերություն), «Այդպես կարող էին հանդիպել հին ծանոթները, հանդիպել պատահաբար ու նորից երկար ժամանակով բաժանվել» /328/ (չափի հարաբերություն), «Արքան, Հայր Մարդպետին հինգ մատների պես հանաչելով հանդերձ, խորապես ազդվեց և հուզվեց նրա հոգատարությունից» /333/ (զիջման հարաբերություն), «Աչքները վազում էր փողոցներով... Նույնիսկ մոռացած հարթ ու կոպիտ մագերով վերակացուի գոյությունը» /246/ (որոշչի հարաբերություն):

Թեքույթներն ու հերթագայությունները՝ որպես շարահյուսական կապակցության անփոխարինելի միջոցներ, գունագեղ են դարձնում գրողի խոսքը, պատկերավոր ու կենդանի:

Ներգոյական հոլովն արտահայտում է հիմնականում տեղի հարաբերություն՝ ում թեքույթով. «Զէ՛, Արշակա՛վանում, ինչպե՛ս և ամենուր, ապահարզանի իրավունք չկա» /344/: Արշակա՛վանում -ը ոճականորեն չեզոք է, որովհետև իր փոփոխականը չունի: Բառեր կան, որոնք ներգոյական չունեն: Այս դեպքում համապատասխան քերականական իմաստն արտահայտվում է ոչ թե ձևաբանորեն, այլ նկարագրական եղանակով, տվյալ բառի տրականի ու մեջ բառի կապակցությամբ: Այս երևույթը խոսում է ում թեքույթի սահմանափակ կիրառության ու նաև այն մասին, որ կապերը երբեմն թեքույթների արժեք են ունենում: Սակայն թեքույթները շարահյուսական միավորներ չեն. «Հոլովական թեքույթը,- ինչպես նշում է Ռ.Իշխանյանը,- շարահյուսորեն չի կապակցվում բառահիմքի հետ, այլ կցվում է նրան (եթե վերջավորություն է՝ սեղան + ի) կամ հենց բառահիմքն է փոխվում (եթե հոլովական ձայնդարձ է՝ տուն > տան), ուրեմն, հոլովական թեքույթի... և բառահիմքի հարաբերությունը շարահյուսական մակարդակի քննության նյութ չէ, շարահյուսական հարց չէ»<sup>7</sup>:

Բավարարվենք միայն մեկ օրինակով. «Իսկ արքան, մտքերի մեջ խորասուզված, անշարժ նստել էր բազմոցին ու մոռացել նրա գոյությունը» /418/: Ոճական առումով, իրոք, նախընտրելի էր կապային կառույցը, որովհետև մեջ կապով ավելի է շեշտվում արքայի՝ բազում հոգսերի մեջ լինելը:

Տուն բառը նույնպես չունի ներգոյական հոլով: Դրա փոխարեն գործածվում է նրա տրական հոլովը՝ ու-ա հերթագայությամբ և ը հոդով. «Իսկ առավոտյան դրկից կանայք, փեսայի առնել հավաքված, սպասում էին կուսության առհավատչյան...» /342/: Տանը ձևը խոսակցական ոճի նրբերանգ ունի, որն էլ տան մեջ ձևից նախընտրելի է Պ. Զեյթունցյանը՝ ելնելով ժողովրդական այդ սովորույթի նկարագրության պահանջից: Ժողովրդախոսակցական ոճի

<sup>7</sup> Տես՝ Ռ. Իշխանյան, Արդի Հայերենի շարահյուսություն: Պարզ նախադասություն, Ե., 1986, էջ 39:

արտահայտությունն է նաև ներգոյական հոլովի ում թեքույթով ձևերի՝ որոշյալ հոդով կիրառությունը, որը, սակայն, Զեյթունցյանի պատմավեպում սակավադեպ է. «Բայց ուշքն ու միտքը (Արշակի - Ա.Ս.) Արտաշատի պալատումն էր» /351/:

Հոդերի կիրառությունը: Թեքույթավորման՝ որպես շարահյուսական կապակցման միջոցի դրսևորման ձևերից են նաև հոդերը: Հոդերը՝ ս,դ,ն,ը, քերականական այն միջոցներն են, որոնք կոնկրետացնում են բառիմաստը, այն օժտում առարկայական վերաբերությամբ: Ժամանակակից Հայերենում հոդերը բաժանվում են իմաստային չորս խմբի՝ ցուցական՝ (ս), դիմորոշ՝ (ս,դ), ստացական՝ (ս,դ,ն,(ը)), որոշյալ՝ (ն,ը): Վերջինս հակադրվում է անորոշի քերականական կարգին, որն ունի Օ և մի արտահայտության ձևերը:

Հոդերի գործածությունը անհրաժեշտություն է ոչ միայն խոսք կառուցելու համար, ցույց տալու բառի ընդհանուր և մասնավոր իմաստների փոխհարաբերությունը, դիմորոշությունը, ստացական ու ցուցական իմաստները: Հոդերը ունեն նաև ոճական արժեք: Շարահյուսական կապակցման մյուս միջոցների հետ դրանք նույնպես ոճավորում են խոսքը, նպաստում գրողի հաղորդման նպատակադրմանը:

Ինչպես չի կարելի խոսք կառուցել առանց շարահյուսության կամ առանց հոլովական թեքույթների ու հերթագայության, այնպես էլ կապակցված խոսքը կիմաստազրկվի առանց հոդերի կիրառության: Բերենք մեկ օրինակ. «Քարե տուրակից հետո մաքուր օդն ու մաքուր երկինքը այնպիսի հրաշք թվացին, որ գիշերվա երկյուղներն ու սև մտքերը միանգամից վերացան, և գոյություն պարզ հաճույքը, թարմ օդի հետ միասին, խփվեց նրանց երեսին»<sup>8</sup>: Առանց ընդգծված հոդերի նախադասությունը, բնականաբար, մտքի խաթարում կունենար: Այս օրինակում ընդգծված հոդերը ոճականորեն չեզոք դեր ունեն:

Այժմ բերենք մի քանի օրինակներ, որոնցում հոդերը ավելի ակտիվ ոճական արժեք ունեն. «-Ապա, վեր կաց, Եփրեմ... Վե՛ր կաց, վե՛ր... Արի լվացվի՛ր... Երեսդ ջո՛ւր արա, որ մի քիչ թարմանաս...» /363/: Երեսդ բառում գործածած դ ստացական հոդը ոճական կիրառություն ունի, որովհետև քո երեսը կապակցության փոխարեն գրողը գործածել է երեսդ, որով խոսքը դարձել է և՛ ավելի կարճ, և՛ ավելի բարեհունչ ու բնական:

Ավելորդ կլիներ իմ հատկացուցչի գործածությունը նաև հետևյալ նախադասության մեջ. «-Քույս չի տանում, արքա՛... Մենք դեռ ճատրակ պիտի խաղանք»/366/:

Ոճական նպատակներով և հավատարիմ արևմտահայ լեզվի կառուցվածքային որոշ առանձնահատկություններին՝ Պ.Զեյթունցյանը իր հերոսների խոսքում ս,դ ստացական հոդերի հետ գործածում է նաև իմ, քո անձնական դերանունները: Ներկայացնենք փոքրիկ մի հատված թուրքական խորհրդարանի մեքուս Վարդգեսի՝ աքսորից կնոջն ուղղված նամակից.

«...Իմ անուշիկ ու խելոք կինս, դու, որ իմ հոգիս ու կյանքս ես, դու, որ իմ կյանքիս կենսատու արևն ես, գիտե՞ս, որչափ կտանջվիմ՝ քեզի համար, գիտե՞ս, իմ ամբողջ հոգն ու վիշտը միայն դու, քու վիճակիդ անորոշությունն է:

...Դե՛հ, մնա՛ք բարով, իմ հոգյակնե՛րս, եկեք անգամ մըն ալ սեղմեմ ձեզ

<sup>8</sup> Պ եր 6 Զեյթունցյան, Վերջին արևադարձ (այսուհետև բնագրին կից լրացվի ՎԱ և կտրվի միջբերման էջը), Ե., 1989, էջ 475:

իմ լայն կրծքիս վրա, որուն տակ բաբախուն սիրտը միայն ձեր և մարդկության սիրով է տոգորված...»/ՎԱ, 590/:

Հատկացուցիչների հետ ստացական հոգերի կիրառությունը խոսքին հաղորդում է անսահման սիրո, կարոտի, սրտաբուխ ու անկեղծ ջերմության տաք հնչերանդ:

Գրողը երբեմն դիմում է ստացական հոգի հնաբան գործածությանը. «ԵՎ ի զարմանս Զոհրապի, հենց անգլիացին, որը ընդհանուր պատկերացման համաձայն, պետք է լիներ խորամանկ, նենգ և զգուշ, ասաց միակ բացահայտ ճշմարտությունը.

– Պետք է Հավատալ զորեղ միջամտության, քանի որ բոլորն էլ մի բան ստացել, կամ ստանալու են՝ ի գին Հայկական հարցի»/ՎԱ, 575/:

Դիմորոշ հոգերը նույնպես նպատակադիր գործածություն ունեն Զոհրապի խոսքում: Հեղինակը դրանք գործածում է առանց համապատասխան դեմքի անձնական դերանունների. «– Ես աղեկ եմ, – կտրական ասաց Վարդգեսը: – Զոհրապն ալ աղեկ է: Կերթաս, կըսես Կլարային: Երկուքս ալ շատ աղեկ ենք»/ՎԱ, 477/, «– Ամենքս ալ աղեկ ենք, – գայրույթից էլ բան չգտավ ասելու Վարդգեսը»/ՎԱ, 477/:

Սակայն տրամաբանական չեղտը ենթակայի վրա դնելու դեպքում Պ. Զեյթունցյանը գործածում է նաև դերանունը, որով ավելի է ընդգծվում ասելիքի ելակետը. «– Դուք ինքններդ եք բարենորոգումները անիրականանալի դարձնում, – մեղադրեց առաջին թարգմանը»/ՎԱ, 568/:

Տրամաբանական չեղտի պահանջով գործածում է նաև անձնական դերանուն + գոյական կաղապարով բացահայտյալ – բացահայտիչ կապակցությունը. «– Ես ուրախ եմ, որ դուք՝ հայերդ, դեմ եք անջատողական ձգտումներին, որովհետև դա չի բխում ձեր ազգային շահերից, – հետզհետե բարակող ձայնով ասաց դեսպանը»/ՎԱ, 574/:

Բերված օրինակներումս, դ հոգերը ստացականության ու դիմորոշության հետ արտահայտում են նաև որոշյալ առումը՝ ցույց տալով, թե կոնկրետ որ առարկայի մասին է խոսքը:

Որոշյալ առմանն, ը հոգերը ժամանակակից հայոց լեզվում կատարում են մի քանի դեր՝ մասնավորապես առանձնացնող, ընդհանրացնող, ծավալային ամբողջություն արտահայտող և գոյականացնող: Ն, ը հոգերը ժամանակակից հայոց լեզվում սահմանափակ կիրառություն ունեն. դրվում են միայն ուղղական և սեռական – տրական հոլովների վրա: Այս հոգերը չունեն իմաստային տարբերություն: Նրանց տարբերությունը պայմանավորված է դիրքով. ձայնավորով վերջացող բառերը ն հոգն են ստանում, իսկ բաղաձայնով վերջացողները՝ ը հոգը: Սակայն տրամաբանական չեղտի ազդեցությամբ դրանք կարող են փոփոխվել: Սրանով է պայմանավորվում այս հոգերի ոճական արժեքը:

«... Լեզվաբանական գրականության մեջ ճիշտ կերպով նշված է, որ բառերի անհնդ գործակցությունը համապատասխանում է խոսքի արագ ընթացքին, իսկ հոգով գործակցությունը՝ ավելի դանդաղ ընթացքին, որովհետև հոգով գործածված գոյականները առանձնանում են որպես խոսքի ելակետ, և միտքը նրանց վրա կանգ է առնում»<sup>9</sup>: Հոգերի՝ խոսքին հաղորդած այս արագ և դանդաղ ընթացքը նույնպես որոշակիորեն ոճավորում է խոսքը:

<sup>9</sup> Տես՝ Մ. Ա. սատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Ա, էջ 242:

Ինչպե՞ս է Պ. Զեյթունցյանը օգտագործում Հոդերի այս առանձնահատկությունները, և ինչ ոճական արժեք են նրանք Հաղորդում գրողի խոսքին: Օրինակները բերենք Արշակ արքայի մտորումներից: Տրամաբանական շեշտի պահանջով շարադասությունը դարձել է շրջուն, գործածվել են սաստկական բառեր, և ը Հոդը փոխարինվել է ն-ով. «Ո՞վ էր ինքը: ... Բայց չէ՞ որ առաջ այդպիսին չէր, ամբողջական մարդ էր ժամանակին, արատներն էլ էին լիարժեք, առաքինություններն էլ: Ի՞նչ պատահեց: Օրերից մի օր արթնացավ, ու պարզվեց, որ գահն էլ էր կիսատ, իշխանությունն էլ, երկիրն էլ, ժամանակն էլ»/353/: Ուրեմն՝ Հոդերը ևս դառնում են շարահյուսական կապակցման միջոց և մյուս միջոցներին լրացնելով ու նրանց Համահունչ՝ ոճավորում են գրողի բյուրեղյա լեզուն, շնչավորում այն:

Պ. Զեյթունցյանը որոշյալ Հոդեր է գործածում, երբ ոչ գոյական խոսքի մասերին տալիս է գոյականական, առարկայական նշանակություն. «Սա այն Հազվադեպ օրերից մեկն էր, երբ իմն ու քոնը չկար, կար ամեն ինչից վեր կանգնած մարդկային մի Համերաշխություն, մտքերի ու Հույզերի զարմանալի ընդհանրություն»/371/, «Վերջին օրերն էին, վերջին ժամերը: Կամ Հրաշքով կիրկվի երկիրը, կամ ոտքի տակ կընկնի: Երկուսից մեկը, երրորդ ճանապարհ չկար: Երրորդ ճանապարհը ուրիշների Համար էր, հայիմը երկուսն էին միայն»/433/:

Գրողի գրչի տակ արժեքավորվում է նաև անորոշ առումը: Նրա խոսքը արագություն, թափ ու ուժ է ստանում անորոշ առումով թվարկվող գոյականների կիրառությունից.

«Եվ Հանկարծ նիչ, աղաղակ, արցունքներ, գրկախառնություն, ինչ որ մեկն իր Հարազատին է ամբոխի մեջ գտել:

... Տնագործ տաբատներ, Հորթի կաշվից ոտնամաններ, փափուկ մուգակներ, ծայրերը կեռ մույկեր, ոսկրե ու փայտե կոճակներ, թաղիքե գլխարկներ, այծենակաճներ, քաթանե գլխաշորեր, շրջագգեստներ, կրիայի պատյանից շինած սանրեր...

Եվ Հանկարծ՝ նորից աղմուկ ու իրարանցում. գող են բռնել»/144/:

Որպես կանոն, Զեյթունցյանի խոսքում անորոշ առումով է գործածվում նաև կոչականը՝ լեզվի շարահյուսական Համակարգի կարևոր բաղադրամասերից մեկը.

«Մորգենթաու-Մնացե՛ք բարով, փաշա՛: Ցանկանում եմ, որ ողբերգակի ձեր դերը կարճատև լինի»/10/:

Ժամանակակից Հայերենում ինչպես և Զեյթունցյանի արձակում անորոշ առումն արտահայտվում է ոչ միայն Օ Հոդով, այլև մի անորոշ Հոդով: Այս Հոդի կիրառությունը ոճական նշանակություն է ստանում, երբ գործածվում է Հոգեկան այնպիսի անսովոր զգացական վիճակներ ցույց տալու Համար, որոնք կարող են արտահայտվել նաև այլ որոշիչներով:

Օրինակ՝ «Փառանձեմը մի պահ այդպես էլ մնաց ոտքերի մատների վրա, և դեմքին մի տանջալի հարց երևաց, թե ինչպես մինչև Հիմա ամուսնու հետ Համբուրվելիս կարիք չի զգացել մատների վրա բարձրանալու, և մի անհասկանալի երկյուղ ու դող անցավ նրա մարմնով»/116/:

<sup>10</sup> Պերճ Զեյթունցյան, Ընտիր երկեր, հ. 2, Ե., 1987, էջ 74:

Այսպիսով՝ թեքնոլոգիական և հերթագայության դրսևորած քերականական բազմազան արտահայտություններ դառնում են շարահյուսական կապակցության այն կարևոր միջոցները, որոնք իմաստավորում ու ռեալորում են տաղանդավոր գրողի՝ Պերճ Զեյթունցյանի խոսքը, ձևավորում նրա անհատականությունը:

## СТИЛИСТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ СКЛОНЕНИЯ И ЧЕРЕДОВАНИЯ В ПРОЗЕ П.ЗЕЙТУНЦЯНА

А.А.САРГАТЯН

### Резюме

Средства синтаксической связи — чередование и склонение — это те важнейшие факторы, с помощью которых можно образовать речь. Проза П.Зейтунцяна изобилует использованием этих средств, с помощью которых он стилизует свою речь, обуславливая её индивидуальностью образов, историческим периодом, темой и описанной средой.